# Մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորանքի խոսքը Գիտելիքի, գրի ու դպրության օրվա կապակցությամբ

01.09.2022

*Սիրելի աշակերտներ, հարգարժան ուսուցիչներ, կրթության համակարգի նվիրյալներ,հարգելի ծնողներ,*

Շնորհավորում եմ բոլորիդ Գիտելիքի, գրի և դպրության օրվա առթիվ: Տոնական այս օրն առանձնակի ջերմությամբ ցանկանում եմ շնորհավորել բոլոր նրանց, ովքեր առաջին անգամ են ոտք դնելու դպրոց և մաղթել, որ այս սեպտեմբերի 1-ը մեր սիրելի առաջին դասարանցիների համար դառնա լուսավոր ու մեծ ճանապարհի սկիզբ, իսկ ուսումնառության ողջ ընթացքը լինի աշխարհաճանաչման ու ինքնադրսևորման կարևոր ժամանակաշրջան:

*Կրթության ոլորտի հարգելի գործընկերներ,*

Նոր ուսումնական տարին պարտավորեցնող է բոլորիս համար, քանի որ կրթության բնագավառում իրականացվող պետական բարեփոխումների հաջողությունը կախված է յուրաքանչյուրիս հետևողական աշխատանքից ու նվիրումից: Եվ այս հարցում պետք է առաջնորդվենք արդի աշխարհում բազմակողմանի զարգացած, պատշաճ կրթություն ստացած, ազգային արժեքներ կրող և պետականության զգացումով քաղաքացիներ կրթելու և դաստիարակելու կարևոր առաքելությամբ: Քանզի բոլորս գիտակցում ենք, որ կիրթ հասարակությունը ցանկացած պետության վաղվա օրվա, լուսավոր ապագայի երաշխավորն է:

Իմ ցանկությունն է, որ մեր դպրոցականներն ու ուսանողները հենց այս գիտակցումով և ամենայն պատասխանատվությամբ մոտենան ուսումնառության գործընթացին, չդադարեն հարստացնել իրենց գիտելիքներն ու կարողությունները՝ դառնալով պետականաշինության գործի կարևոր մասնակիցներն ու մեր երկրի զարգացման և հզորացման առանցքային դերակատարները:

Ուստի ակնկալում եմ, որ փոխհամագործակցված սրտացավ աշխատանքի, ոլորտում յուրաքանչյուրիս անելիքների հստակ գիտակցման և գիտելիքի ուժով մեր երկիրը շենացնելու մեծ պատասխանատվության արդյունքում մենք կունենանք գիտելիքահեն հասարակություն և զարգացող պետություն: Իսկ այս ուսումնական տարին թող մեծ ուժ ու եռանդ հաղորդի ոլորտի նվիրյալներին, ուսումնառության նկատմամբ մեծ ձգտում և գիտելիքների հարստացմանն ուղղված անսպառ ջանքեր՝ դպրոցականներին և ուսանողներին:

Շնորհավոր Գիտելիքի, գրի և դպրության օրը: